

ՏՆՕՐԵՆ - ԽՄԱՆՊՐԱՊԵՑ

Հ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺՍՆՈՐԴԱԳՐՈՒՅԻՆ

ՏԱՐԵԱՆ 500 ՂՐԸ
ԵՆՅԱՄՍԵՍ 250
ԵՌԱՍՍԵՍ 150

Քանոնադրուած էր իսկայն
ամեն ամսոյ 1 ին և 15 ին



Fondateur
M. Mamourian

Directeur-Rédacteur en chef
H. MAMOURIAN

"ARÉVÉLIAN MAMOUL",
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓԱՐՍ

100 ՓԱՐՍ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՅՈՒԴԱՐԶ

ԼԻՍԹԱՅԻ ԽՆԴԻՐԸ

Ինճէան Եպս. Իզմիրի առաջնորդութենէն հրածարած է, ժամանակէ մը ի վեր. նոյնիսկ իր յաջորդն ալ մեկնեցաւ Պոլիսէն, այս շարժումը Մազթենք որ Իզմիրցիք, երբէք նեղը չի մնան, օր մը, նորէն, իրենց առջի առաջնորդը փնտռելու աստիճան:

Ինճէան Սրբազանի հրածարման պարագաները քիչ մը յուզումնալից եղանակաւ հրատարակուեցան, հանդիմանական ինքի մը կար մէջտեղը, որ չէր յաջողած, ինչպէս չի յաջողեցաւ Պոլսոյ մէջ. Առաջնորդը պատուոյ խնդիր բրու ա գ ինքզինքին, և նախամեծար սեպեց հետաւոր, աղքատիկ, փոքրիկ թեմի մը առաջնորդութիւնը, հայոց արքեպիսկոպոսական առաջին թեմէն: Հաւանորէն նոյն պիտի ընէր եթէ Պոլիս եղած ըլլար Սմին մարդ կ'զգայ, կը խորհի, կը գործէ իր խառնուածքին համեմատ Բայց այդ չէ մեր այսօրուան խորհրդածութեանց առարկան:

Իզմիրի նախագոյ առաջնորդին հրածարման իրողարձուութեանց պահուն, ընդհանուր ազմուկին մէջ, իր մասին զանազան անախորժ գրոյցներ հրատարակուեցան, գաւառականութեան ամբարտաւորութիւններ երեւցան թերթերու մէջ կամ բերնէ բերան, լեւոյսի խնդիր մը պատրաստ կարգ մը շրջանակներու մէջ և անարգութեան սիւնի ու ամբաստանեալի ակտի խօսքեր եղան:

Ինճէան եպիսկոպոսը կը ճանչնամ իր գարտապանիորդներէն իր նկարագիրը ձանձօք է ինճի, իր կողմնակիցներէն ժամանակէն և հետեւած եմ անոր զարգացումին ու գործունէութեան: Բաւ եկամ յի հակառակորդ, ամենուր մէջ նկարագիրը փնտռել ու ճանչնալ իմ հին ունակութիւնս է եղած: Մարզը կը գտնուէր որ կը յարգեմ ըստ իր նկարագրին, անոր բոլոր յատկութիւններն ու թերութիւնները կը շքանան ինճի համար վերջ ի վերջոյ, կը մնայ միմիայն նկարագրը, և ուրիշ ամէն ինչ կը գաւառայ երկրորդական:

Ինճի համար մարդիկ երեք դասակարգի կը բաժնուին. լաւ նկարագրի տէր մարդիկ, բաւ նկարագրի չունեցողները և անոնք որ գէշ նկարագրի ունին: Այս վերջիններուն ինչ ըլլալը յայտնի է. երկրորդ դասակարգին ալ մեծամասնութեան թեկնածու է երրորդին Առաջինները չմիայն, լաւ նկարագրի տէրերը, արժանի են ամեն յարգանքի ու վստահութեան: Ինճի համար, Ինճէան Սրբազան կը պատկանի այդ դասակարգի մարդոց:

Լաւ նկարագրի մը չի փոխուիր մէկ օրէն միւսը և երբ անոր մասին կարգ մը ծանր ամբաստանութիւններ կ'ընեն անձանոթ ու անպատասխանատու աղբիւրներէ բխած գրոյցներ ու թուրքաբանութիւններ, բնական է որ կասկածաւորութիւնը կը մնայ քիչ մը և կը թերահաւատիմ, սպասելով որ միւս կողմէ ալ ասիթը ունենայ ինքզինքը պաշտպանելու: Այս բանը ըսած էր անցեալները, և ըսած էր նաև որ իրատ բնական բան մըն է որ ժողովուրդի առաջնորդ մը, վարիչ, օրէնքը գործադրած ատեն, զժողովներ յարուցանէ իրեն գէշ և անոնք ալ ամեն առիթէ օգտուին իրենց չի սիրած մարդը հառաջնորդ համար:

Արդ, այս անգամ «Արեւելեան Մամուլի» մէջ հրատարակուած տեսանք, Ինճէան Ար. պատասխան - պաշտպանողականը, զոր Պոլսոյ մէկ երկու թերթերն ալ հրատարակեցին առանց մեկնութեան. թէ և ես պիտի նախընտրէի որ իրեն գէշ ամբաստանութիւններ եղած թերթին մէջ երեւար ան և պատասխանուէր, եթէ տեղի կար ատոր:

Ու չի ուշով կարողացի այդ գրութիւնը և կարծեմ թէ բաւական մը էր ինճի եղած եմ լեւոյսի այդ խնդրին մասին: Երբեք իմ մտաբն, համարում մը գոյացունելու ու զայն հրապարակելու չիմու հոս, նպատակ չունիմ, պատճառները կրկնելու ինչ որ բոլոր մանրամասնութիւններով, բայց խնդրին էութիւնը աս է:

Եթէ իրականական բռնապետութեան, պատերազմի և հայրենալուծ քաղաքականութեան էն վստահուոր պահուն, հայ մը և մէկ երկու արքանեակներ սպանապետը կը ցրտեն կառավարութեան գէշ և կը ձերբակալուին, կուսակալը կ'առաջնորդուի որ ուրիշ պահուած յեղափոխականներ ալ կան քաղաքին մէջ, անոնց լեւոյս կուզէ Առաջնորդէն, հակառակ պարագային սպառնալով նահանգին բոլոր հայերը քաղաքի Առաջնորդը բաւական խոստովանութիւն յետոյ, քաղաքական ժողովի անդամներու խորհուրդով, ժողովրդական քուէի միջոցով անհամախափ — 45 հոգիներ — ցանկ մը կը շինէ ու կը յանձնէ կուսակալին, սրտնց տասնորներ արդէն ձերբակալուած էին: Ասոր վրայ, ժողովուրդէն արդէն իսկ տեղական եղած երեք-չորս հարիւր հոգի կը վերադարձան և շարք կը խափանուի:

Չիմայ, եթէ կայ Հայ մը, որ կրնայ ըսել թէ լաւագոյն էր որ տարող Իզմիրի բոլոր Հայերը, քուէին ու տանջուէին ու փճանային, փոխանակ այդ մէկ երկու տասնեակ անձերուն ձերբակալութեան, շիտակը ես պիտի ուզէի մէկ մը տեսնալ Հայու, նոյնիսկ մարդու այդ հետաքրքրալարժ տիպարը:

Ես միշտ այնպէս նկատած եմ, և գիտեմ թէ շատեր ալ ինճի պէս կը խորհին, որ յեղափոխականը, շարժումները, բանքը, աքսորը, մահը արհամարհող անձնուէր է պէ մըն է, և ուրիշ է զօրուի իր նմաններուն, անբարեառաններուն, իր ազգին համար: Անոր գերագոյն խաչալն է այդ:

Ան յաճախ ինքզինքը կը զօնէ, նոյնիսկ երբ անմիջական կերպով այդ բանը չի պահանջուի իրմէ: Ան ինքզինքը կը զօնէ, նոյնիսկ միակ անհատի մը փրկութեան համար: Արդ իսկական յեղափոխականներ, ինչպէս պիտի մերժէին երթալ

կամովին յանձնուիլ ու մահուան շնորհաւ ընթանալ, երբ այդ բանը անմիջական կերպով պահանջուէր իրենցմէ և երբ հաւատարմ ըլլային թէ, նախընտրեց օրինակներ կ'առնէին, ապացուցանելու համար որ, իրենց համար ժողովուրդ մը պիտի տառապէր ու պիտի կորնչէր: Ես ապահով եմ թէ անոնք պիտի չընկրկէին այդ վսեմ զոհողութեան առջև: Եւ ինչ կ'ընէ, առաջնորդը, իր խորհրդականներուն ու ժողովուրդին հետ Գիտնալով այսպէս ըլլալը, կըրճատուած ու կարճ ցանկ մը կուտայ անուաններու և կ'ըսէ. «Եթէ կրնաք գրտէք և սուէք զանոնք, մենք չենք խառնուիր ատոր, բայց մեզի վերադարձուցէք տեղահանուած մեր ընտանիքները, հարիւրաւոր մեծ ու պղտիկ ազգայինները»: Արդարև կը վերադառնան անոնք և կը կրկնեն, շարք կը խափանուի:

Այս է առաջնորդին զաւանտութիւնը: Զարմանալի բան է նորահարուստի ան ժողովուրդը փրկած է ամէնանուազայն զոհողութիւնով, որ կարելի ըլլայ երբեք երեւակայն նմանօրինակ գոխային ըժփիմ մը մէջ:

Ուրիշ առաջնորդ մը որ ամբողջ իր ժողովուրդը կորսնցուցած է և միմիայն իր անձը ազատած է, այսօր հանդէսէ հանդէս, պատիւէ պատիւ կը պըտուածքի, և անոր բան մը հարցնող չըլլար, իսկ ան որ իր ժողովուրդին ազատութեան մէջ աշխատութեան ու ճարտարամտութեան մեծագոյն բաժին մը ունի, զայն գաւառան կը կոչեն ու ամբաստանալու թոթոթի վրայ նստեցնել կ'ուզեն: Իրաւ է որ ժողովուրդին բարիքին նուիրուող որ և է մէկը, երբեք մեծ յայտը պէտք չէ տածէ անոր կրօնապաշտպան զգացումներուն մասին: Այդ պարագային ժողովուրդը նուազ յանցաւոր է քան իր լրագրութիւնը, որ իբր թէ հանրային կարծիքը լուսաբանելու և առաջնորդելու պարտականութիւնը ունի: Ահաւասիկ անձուէր և անձուտէր վերայիշեալ երկու առաջնորդներուն օրինակը, լրագրութիւնը գտնուեցաւ իր պաշտօնին բարձրութեան վրայ, կատարեց իր գործը, Ս'հ, մեր այսօրուան լրագրութիւնն ու անոր առաջնորդողները:

Վերադառնալով հարցին կ'եզրակացնեմ: Օրուան համբաւուոր մէկ ասացուածքը գործածած ըլլալու համար, և հանելի ըլլալու համար կարգ մը շքանակներու ընդունելիք որ Իզմիրի առաջնորդը և ժողովականները «պղտիկ առաջնորդի» ձև գործեր են: Զիմայ, սահմանադրական ազատ շրջանի մէջ, անհարկի կերպով «պղտիկ սպորիտութիւն» մը գործուելուն կողմնակիցները, ինչպէս պիտի կրնային հակառակորդ ըլլալ, բռնապետական շրջանին մէջ, ամբողջ ժողովուրդի մը կեանքն ու ինչքը փրկելու համար գործուելիք «պղտիկ սպորիտութեան մը»:

Այդպիսի պարագայի մը, ես «մեծ սպորիտութիւն» իսկ շատ չեմ գըտնիր:

Նկարագրի տէր մէկը, կրնայ ամբաստանուիլ, պաշտօնանկ ըլլալ, մտապետութեան տրուիլ, հակառակորդներ ունենալ, ու նոյնիսկ դատապարտուիլ ու քարկոծուիլ, բայց ան, այդ ամենքէն, աւելի մեծցած ու աւելի փառաւորուած դուրս կուգայ ի վերջոյ:

Եւ ես արդէն առաջուց լսի թէ, Ինճէան Սրբազան, մին է նկարագրի տէր հազուադէպ այն մարդոցմէն զորս ես ճանցած ըլլամ:

Վերջէն է՛ր Թ. ԱՍՊԵՏ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ
ԳԱՐԱԹԱՇԻ ՇԱՆԴԵԱԸ

Կիրակի օր Տ. Կ. Մ. Պալեօղիանի պարտէզին մէջ տեղի ունեցաւ Գարաթաշի Պոյ-սքառութիւնը: Երգման հանդէսը Պարտէզը և բնմը զարդարուած էին Համաձայնական զրօշակներով: Սուտներամ և խիտ բազմութիւն մը հաւաքուած էր թէ Իզմիրէն թէ Գարաթաշէն:

Բնարէն վերջ բեմ ելաւ Պ. Թ. Պոյ-յաճեան. վեր հանեց Գարաթաշի ամբողջ հայերու ժիր գործունէութիւնը և մարմնամարզական շարժումին մէջ անոնց գրաւած կարեւոր դերը: Սետոյ ակնարկ մը նետեց սքառութեան գործունէութեան վրայ, հրաւեր ուղղեց հայ պատանիներուն որդէսղի ամէնքն ալ սքառութ ըլլան և այս առթիւ հայ ծնողներուն վրայ պարտ դրաւ քաջակերի իրենց տղայը:

Յայտագրին առաջին մասը լրացաւ զանազան սրտատանութիւններով և նուագներով: Երկրորդ մասը կը կողմէր հանդէսին ոգին, սքառութեան կրողները Հեղահետէ կուգան շարունակ հայ շարքաչ պատանիները, կայտառ և հրաշուի, իրենց լիարեն հուն առաջնորդութեամբ Պ. Յանրդեան կ'արտասանէ երգման բանաձևը:

որուն կը պատասխանեն լիարենը, յանուն բոլոր սքառութիւնը: «Առ Աստուած, առ հայրենիք, առ մարդկութիւն՝ յարգանք, աճնուելու լին և օջնութիւն» յետոյ կը բաժնուին «Բարձրացիր - Բարձրացուրը», սքառութիւնը նշանարան - մնայալը Գընարը, հեղահետէ նուագեց «Բամբ Ռոտանը, անգլիական, ֆրանսական, ամերիկեան, իտալական, յունական, հրեական քայլերգիները՝ երգման հանդէսին յաջորդեցին ազգային պարեր, ուր աղջնակներ, զաշնակից զրօշակներով պարտւում: Քեմին վրայ խաղացին տղային պարեր: Իբր վերջաբան ներկայացուցան կենդանի պատկերներ, որոնք նոյնպէս յաջող անցան:

Հանդէսին ներկայ էին տեղապահ Հայրը, նոյնպէս հրատարակած էին յոյն, հրեայ սքառութեան ներկայացուցիչները: Հանդիսավայրին վրայ բան մը չենք կրնար ըսել, նկատի ունենալով այս ամէն շանքերը, զորս օթափած էին կազմակերպիչները ժողովուրդը գոհացնելու համար: Կը մնայ հրատարակաւ վեր հանել կազմակերպիչներուն աշխատութիւնները, եամտը որ չիդու դարձած էր հանդէսին նոյնպէս շնորհակալութիւնը և կազմակերպիչները, որոնց անունները մեր յիշգրտութեան կը մտնեն:

